

Կ-401-22.10.2018,31.10.2018-ՊԻՄԻ-011/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ԷՐԵՐՈՒՆԻ-ԵՐԵՎԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 2800-ԱՄՅԱԿԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՄԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՔՐԵԱԿԱՆ  
ԳՈՐԾԵՐՈՎ ՀԱՄԱՆԵՐՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ի նշանավորումն Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը հայտարարում է համաներում:

**ԳԼՈՒԽ 1**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքը կարգավորում է 2018 թվականի հոկտեմբերի 21-ը ներառյալ հանցագործություն կատարելու մեջ կասկածվող, մեղադրվող կամ հանցագործություն կատարած անձանց նկատմամբ համաներում հայտարարելու հետ կապված հարաբերությունները:

**ԳԼՈՒԽ 2**

**ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ**

**Հոդված 2. Համաներման կիրառման շրջանակները**

1. Համաներում հայտարարելով՝ պատժից ազատել՝
- 1) առավելագույնը չորս տարի ժամկետով՝ ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված անձանց.
  - 2) այն անձանց, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, կամ պատժի կրումը հետաձգվել է.
  - 3) ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների դատապարտված անձանց:
2. Համաներում հայտարարելով՝ պատժից ազատել՝ առավելագույնը վեց տարի ժամկետով՝ ազատազրկման դատապարտված՝
- 1) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամներին.
  - 2) սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ հղի կանանց.
  - 3) սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ երեք կամ ավելի անչափահաս երեխա ունեցող անձանց.
  - 4) սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց.
  - 5) 60 տարին լրացած անձանց.
  - 6) հանցագործությունը մինչև 18 տարին լրանալը կատարած այն անձանց, որոնք նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չեն կրել կամ կրել են, սակայն չունեն դատվածություն.
  - 7) այն անձանց, որոնք Հայրենական մեծ պատերազմի, Աֆղանստանի, Հայաստանի Հանրապետության կամ Լրցախի Հանրապետության պաշտպանության համար մղված մարտական գործողությունների մասնակիցներ են կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավասարեցված են նրանց կամ ունեն բռնադատվածի կարգավիճակ և

միաժամանակ նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չեն կրել կամ կրել են, սակայն չունեն դատվածություն:

8) այն անձանց, որոնք Հայրենական մեծ պատերազմի, Աֆղանստանի, Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության Հանրապետության պաշտպանության համար մղված մարտական գործողություններում զոհված (մահացած) զինծառայողների ամուսին, զավակ կամ ծնող են և միաժամանակ նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չեն կրել կամ կրել են, սակայն չունեն դատվածություն:

3. Համաներում հայտարարելով՝ պատժից ազատել նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատագրկման ձևով պատիժ չկրած կամ կրած, սակայն դատվածություն չունեցող անձանց, որոնք դատապարտվել են՝

1) առավելագույնը վեց տարի ժամկետով ազատագրկման և սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ կրել են ոչ պակաս, քան նշանակված պատժի մեկ երրորդը:

2) առավելագույնը տասը տարի ժամկետով ազատագրկման և սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ կրել են ոչ պակաս, քան նշանակված պատժի կեսը:

4. Համաներում հայտարարելով՝ պատժից ազատել անզգուշությամբ հանցագործություն կատարելու համար՝

1) առավելագույնը վեց տարի ժամկետով ազատագրկման դատապարտված անձանց:

2) առավելագույնը տասը տարի ժամկետով ազատագրկման դատապարտված և սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ ոչ պակաս, քան նշանակված պատժի մեկ երրորդը կրած անձանց:

5. Քրեական գործի հարուցումը մերժել, հարուցված քրեական գործը կարճել, ինչպես նաև դադարեցնել քրեական հետապնդումը կամ չիրականացնել քրեական հետապնդում 2018 թվականի հոկտեմբերի 21-ը ներառյալ կատարած հանցագործությունների դեպքերով (բացառությամբ անմիջականորեն մարդու մահվան հանգեցրած դեպքերի, որոնցով առկա է տուժողի իրավահաջորդի առարկությունը), որոնցով՝

1) անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան չորս տարի ժամկետով ազատագրկում:

2) սույն հոդվածի 2-րդ մասի 1-8-րդ կետերով նախատեսված անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություն կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան վեց տարի ժամկետով ազատագրկում:

3) անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են անզգուշությամբ հանցագործություն կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան վեց տարի ժամկետով ազատագրկում:

4) անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է միայն ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ:

6. Սույն հոդվածի 5-րդ մասը կիրառվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթների պահպանմամբ:

7. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտով նշանակված պատժաչափը կրճատել՝

1) երկու երրորդով՝ անզգուշությամբ հանցագործություն կատարած անձանց նկատմամբ:

2) կիսով չափ՝ դիտավորյալությամբ հանցագործություն կատարելու համար առավելագույնը տասը տարի ժամկետով ազատագրկման դատապարտված և նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատագրկման ձևով պատիժ չկրած կամ կրած, սակայն դատվածություն չունեցող անձանց նկատմամբ:

3) մեկ երրորդով՝ դիտավորյալությամբ հանցագործություն կատարելու համար առավելագույնը տասը տարի ժամկետով ազատագրկման դատապարտված և նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատագրկման ձևով պատիժ կրած և դատվածություն ունեցող անձանց նկատմամբ:

4) մեկ քառորդով՝ դիտավորյալությամբ հանցագործություն կատարելու համար տասը տարուց ավելի ժամկետով ազատագրկման դատապարտված անձանց նկատմամբ:

8. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտով նշանակված պատժաչափը կրճատել ինն ամսով (բացառությամբ սույն հոդվածի 10-րդ մասի 6-րդ կետով նախատեսված դեպքերի)՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, 112-րդ հոդվածի 2-րդ մասով, 123-րդ հոդվածի 3-րդ մասով, 152-րդ հոդվածով, 154-րդ հոդվածով, 165-րդ հոդվածի 4-րդ մասով, 175-րդ հոդվածի 1-ին մասով, 190-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 226-րդ հոդվածով,

235-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 266-րդ հոդվածի 1-ին մասով, 274-րդ հոդվածի 2-րդ մասով, 275-րդ հոդվածի 2-3-րդ մասերով, 280-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 284-րդ հոդվածի 4-րդ մասով, 297-րդ հոդվածի 2-րդ մասով, 327-րդ հոդվածով, 340-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով, 347-րդ հոդվածի 4-րդ մասով, 348-րդ հոդվածով, 349-րդ հոդվածի 3-րդ մասով, 356-րդ հոդվածի 3-րդ մասով, 357-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, 358-րդ հոդվածի 3-5-րդ մասերով, 359-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, 361-րդ հոդվածի 7-րդ մասով, 362-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 363-րդ հոդվածի 5-րդ մասով, 364-րդ հոդվածի 3-րդ մասով, 365-րդ հոդվածի 4-րդ մասով, 366-րդ հոդվածի 4-րդ մասով, 367-րդ հոդվածի 3-րդ մասով, 368-րդ հոդվածի 3-րդ մասով, 369-րդ հոդվածի 3-րդ մասով, 371-րդ հոդվածի 3-րդ մասով, 373-րդ հոդվածի 4-րդ մասով, 377-րդ հոդվածի 3-րդ մասով, 378-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունները կատարելու համար դատապարտված անձանց նկատմամբ, եթե դրանք հանցափորձ կամ հանցագործության նախապատրաստություն չեն:

9. Համաներում հայտարարելով՝ դադարեցնել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձանց նկատմամբ իրականացվող վերահսկողությունը:

10. Համաներումը չկիրառել (բացառությամբ սույն հոդվածի 9-րդ և 11-րդ մասերով նախատեսված դեպքերի)

1) այն անձանց նկատմամբ, որոնց նկատմամբ վերջին տասը տարվա ընթացքում՝

ա. նշանակված պատժաչափը կրճատվել է Հայաստանի Հանրապետության նախագահի՝ ներում շնորհելու մասին հրամանագրի կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ համաներում հայտարարելու մասին որոշման հիման վրա և կարող են մեղադրվել կամ մեղադրվում են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար, կամ

բ. որոնց պատիժը կրելուց ազատել են Հայաստանի Հանրապետության նախագահի՝ ներում շնորհելու մասին հրամանագրի կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ համաներում հայտարարելու մասին որոշման հիման վրա և կարող են մեղադրվել կամ մեղադրվում են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար, կամ

գ. որոնց նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել կամ քրեական հետապնդումը դադարեցվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ համաներում հայտարարելու մասին որոշման հիման վրա և կարող են մեղադրվել կամ մեղադրվում են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար, կամ

2) այն անձանց նկատմամբ, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ կարող են մեղադրվել կամ մեղադրվում են կալանավորման տակ գտնվելու կամ պատիժը կրելու ընթացքում կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար.

3) մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հետախուզման մեջ գտնվող անձանց նկատմամբ, բացառությամբ այն անձանց, որոնք 2019 թվականի փետրվարի 1-ը ներառյալ կամովին կներկայանան քրեական հետապնդման մարմիններ, իսկ եթե գործը դատարանի վարույթում է՝ դատարան.

4) հանցագործությունների առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում.

5) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասով, 112-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով, 132-րդ հոդվածով, 132.2-րդ հոդվածով, 133-րդ հոդվածի 3-րդ մասով, 18-րդ գլխով, 149-րդ հոդվածով, 150-րդ հոդվածով, 153-րդ հոդվածով, 154.1-րդ հոդվածով, 154.2-րդ հոդվածով, 154.4-րդ հոդվածով, 154.5-րդ հոդվածով, 164-րդ հոդվածով, 166-րդ հոդվածով, 168-րդ հոդվածով, 175-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 217-րդ, 218-րդ, 219-224-րդ հոդվածներով, 238-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով, 261-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 262-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 265-րդ հոդվածով, 266-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 272-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 287-րդ հոդվածի 4-րդ մասով, 299-րդ հոդվածով, 300-300.2-րդ հոդվածներով, 301.1-ին հոդվածով, 302-305-րդ հոդվածներով, 309.1-ին հոդվածով, 310.1-ին հոդվածով, 314.3-րդ հոդվածով, 329-րդ հոդվածի 2-րդ մասով, 336-րդ հոդվածով, 341-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 352-րդ հոդվածի 3-րդ մասով, 358.1-ին հոդվածով, 33-րդ գլխով նախատեսված հանցագործությունները կատարելու մեջ մեղադրվող կամ այդ հանցագործությունները կատարելու համար դատապարտված անձանց նկատմամբ, եթե դրանք հանցափորձ կամ հանցագործության նախապատրաստություն չեն.

6) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը կատարելու մեջ մեղադրվող և 37 տարեկանը չլրացած անձանց նկատմամբ, եթե դա հանցավորձ կամ հանցագործության նախապատրաստություն չէ.

7) մի քանի հանցագործություն կատարած անձանց նկատմամբ, եթե այդ հանցագործություններից թեկուզ մեկի համար սույն օրենքով համաներում կիրառելն արգելվում է.

8) այն անձանց նկատմամբ, որոնք դիտավորյալ կատարած հանցագործության համար պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել են և մեղադրվում են պատժի չկրած մասի ընթացքում կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են պատժի չկրած մասի ընթացքում կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար.

9) այն անձանց նկատմամբ, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և կարող են մեղադրվել կամ մեղադրվում են փորձաշրջանի ընթացքում կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են փորձաշրջանի ընթացքում կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար.

10) ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ:

11. Համաներում հայտարարելով՝

1) 2016 թվականի հուլիսի 17-ից հուլիսի 31-ը Հայաստանի Հանրապետության ոստիկանության պարեկապահակետային ծառայության գնդի տարածքում հանցագործություն կատարած, վերջիններիս հետ հանցակցած, այդ նպատակով հանցավորձ կամ հանցագործության նախապատրաստություն, հարակից տարածքներում դրանց հետ առնչություն ունեցող հանցագործություն կատարած, ինչպես նաև 2015 թվականի ապրիլի 24-ին զանգվածային անկարգությունների նախապատրաստության համար մեղադրվող կամ դատապարտված անձանց նկատմամբ հարուցված քրեական գործը կարձել, քրեական հետապնդում չիրականացնել կամ քրեական հետապնդումը դադարեցնել, կամ նրանց պատժի ազատել, եթե դրա դեմ չեն առարկում պատանդառված և (կամ) ֆիզիկական վնաս կրած տուժողները.

2) սույն մասի 1-ին կետը չի տարածվում նույն կետում նկարագրված իրադարձությունների ընթացքում կատարված այն արարքների նկատմամբ, որոնք անմիջականորեն հանգեցրել են մարդու մահվան.

3) սույն մասի 1-ին կետում նկարագրված հանցագործությունների արդյունքում պատճառված նյութական վնասի հատուցման հարցը կարող է լուծվել քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

12. Սույն հոդվածի 1-5-րդ և 7-րդ մասերը կիրառվում են անձի նկատմամբ, եթե սույն հոդվածի 8-րդ և 10-րդ մասերով այլ բան նախատեսված չէ:

## ԳԼՈՒԽ 3

### *ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

#### **Հոդված 3. Օրենքի ուժի մեջ մտնելը**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

#### **Հոդված 4. Օրենքի գործողությունը և կիրառման ապահովումը**

1. Համաներման կիրառումը չի ազատում դատարանների դատավճիռներով նշանակված լրացուցիչ պատիժներից:

2. Համաներման կիրառման դեպքում օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ տուժողին պատճառված վնասի հատուցման հարցը կարող է լուծվել քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

3. Համաներման կիրառման դեպքում դատավճռության մարման հարցը լուծվում է օրենքով սահմանված կարգով:

4. Սույն օրենքը կիրառվում է արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը կիրառելուց հետո:

5. Հանցագործությունների և դատավճիռների համակցության դեպքերում համաներումը կիրառվում է վերջնական պատժի նկատմամբ՝ հանցագործությունների կամ դատավճիռների

համակցության կանոններով այն սահմանելուց հետո: Սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կանոնները հանցագործությունների համակցության նկատմամբ կիրառվում են, եթե սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում մեղազարկող արարքների համար նախատեսված առավելագույն պատիժների հանրագումարը չի գերազանցում չորս տարի ժամկետով ազատազրկումը, սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում՝ վեց տարի ժամկետով ազատազրկումը, իսկ սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված դեպքերում՝ վեց տարի ժամկետով ազատազրկումը:

6. Ազատազրկման վայրերում ալկոհոլամոլությունից կամ թմրամոլությունից հարկադիր բուժվող անձանց նկատմամբ համաներումը կիրառվում է բուժման համապատասխան կուրսն անցնելուց հետո:

7. Հաշմանդամության և տարիքային հիմքով համաներումը կիրառվում է այն անձանց նկատմամբ, որոնք առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ են ճանաչվել, կամ որոնց 60 տարին լրացել է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը:

8. Այլ պետությունների դատարանների կողմից դատապարտված այն անձանց նկատմամբ, որոնք պատիժը կրում են Հայաստանի Հանրապետությունում, համաներումը կիրառվում է նրանց կատարած արարքների համար պատասխանատվություն սահմանող՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդվածներին համապատասխան:

9. Սույն օրենքի կատարումը վերապահել՝

1) Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի և վերաքննիչ քրեական դատարաններին՝

ա. այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի կամ վերաքննիչ քրեական դատարաններում են, սակայն մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը չեն քննվել, կամ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը քննվել են, բայց դատավճիռներն օրինական ուժի մեջ չեն մտել:

բ. այն անձանց նկատմամբ, որոնց հանդեպ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, կամ պատժի կրումը հետաձգվել է: Նշված անձանց նկատմամբ սույն օրենքի կիրառման հարցը լուծում է դատարանը՝ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդության հիման վրա:

2) Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանին՝ Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից դատապարտված այն անձանց նկատմամբ, որոնք պատիժը կրում են Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս:

3) քրեական հետապնդման մարմիններին՝ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը կամ նյութերը քննում են նշված մարմինները:

4) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների պետերին՝ այն անձանց նկատմամբ, որոնք պատիժը կրում են քրեակատարողական հիմնարկներում:

5) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությանը՝ այն անձանց նկատմամբ, որոնք՝

ա. դատապարտվել են ազատությունից զրկելու հետ չկապված պատժի՝

բ. պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել են, և նրանց վարքագծի նկատմամբ իրականացվում է վերահսկողություն:

6) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը՝ այն անձանց նկատմամբ, որոնք դատապարտվել են զինվորական ծառայության մեջ սահմանափակման ձևով պատժի:

7) կարգապահական գումարտակի հրամանատարին՝ այն անձանց նկատմամբ, որոնք պատիժը կրում են կարգապահական գումարտակում:

10. Հետաքննության և նախաքննության մարմինների, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների պետերի, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և կարգապահական գումարտակի հրամանատարների՝ համաներում կիրառելու վերաբերյալ ընդունած որոշումների օրինականության նկատմամբ հսկողություն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

11. Սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված մարմինները համաներման ակտը պետք է կիրառեն սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում: Եթե սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված մարմինների տրամադրության տակ առկա են համաներումը կիրառելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ

գործի հանգամանքները, ապա վերջիններս պարտավոր են համաներման ակտը կիրառել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր ժամկետի լրանալուն:

12. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության դեպքում համաներման կիրառման համար դատապարտյալի համաձայնությունը չի պահանջվում:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԷՐԵՐՈՒՆԻ-ԵՐԵՎԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 2800-ԱՄՅԱԿԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԶԱԿՄԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄՔ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՀԱՄԱՆԵՐՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Կ-401-22.10.2018,31.10.2018-ՊԻՄԻ-011/1 ՕՐԵՆՔԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Կ-401<sup>1</sup>-31.10.2018-ՊԻՄԻ-011/1 ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-401-22.10.2018,31.10.2018-ՊԻՄԻ-011/1

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ԷՐԵՐՈՒՆԻ-ԵՐԵՎԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 2800-ԱՄՅԱԿԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԶԱԿՄԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄՔ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՀԱՄԱՆԵՐՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի նշանավորումն Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը հայտարարում է համաներում:

#### ԳԼՈՒԽ 1

##### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

#### Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է 2018 թվականի հոկտեմբերի 21-ը ներառյալ հանցագործություն կատարելու մեջ կասկածվող, մեղադրվող կամ հանցագործություն կատարած անձանց նկատմամբ համաներում հայտարարելու հետ կապված հարաբերությունները:

#### ԳԼՈՒԽ 2

##### ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

#### Հոդված 2. Համաներման կիրառման շրջանակները

1. Համաներում հայտարարելով՝ պատժից ազատել՝
  - 1) առավելագույնը չորս տարի ժամկետով՝ ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված անձանց.
  - 2) այն անձանց, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, կամ պատժի կրումը հետաձգվել է.
  - 3) ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների դատապարտված անձանց:
2. Համաներում հայտարարելով՝ պատժից ազատել՝ առավելագույնը վեց տարի ժամկետով՝ ազատազրկման դատապարտված՝
  - 1) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամներին.

2) սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ հղի կանանց.

3) սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ երեք կամ ավելի անչափահաս երեխա ունեցող անձանց.

4) սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց.

5) 60 տարին լրացած անձանց.

6) հանցագործությունը մինչև 18 տարին լրանալը կատարած այն անձանց, որոնք նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չեն կրել կամ կրել են, սակայն չունեն դատվածություն.

7) այն անձանց, որոնք Հայրենական մեծ պատերազմի, Աֆղանստանի, Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության պաշտպանության համար մղված մարտական գործողությունների մասնակիցներ են կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավասարեցված են նրանց կամ ունեն բռնադատվածի կարգավիճակ և միաժամանակ նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չեն կրել կամ կրել են, սակայն չունեն դատվածություն.

8) այն անձանց, որոնք Հայրենական մեծ պատերազմի, Աֆղանստանի, Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության Հանրապետության պաշտպանության համար մղված մարտական գործողություններում զոհված (մահացած) զինծառայողների ամուսին, զավակ կամ ծնող են և միաժամանակ նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չեն կրել կամ կրել են, սակայն չունեն դատվածություն:

3. Համաներում հայտարարելով՝ պատժից ազատել նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատազրկման ձևով պատիժ չկրած կամ կրած, սակայն դատվածություն չունեցող անձանց, որոնք դատապարտվել են՝

1) առավելագույնը վեց տարի ժամկետով ազատազրկման և սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ կրել են ոչ պակաս, քան նշանակված պատժի մեկ երրորդը.

2) առավելագույնը տասը տարի ժամկետով ազատազրկման և սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ կրել են ոչ պակաս, քան նշանակված պատժի կեսը:

4. Համաներում հայտարարելով՝ պատժից ազատել անզգուշությամբ հանցագործություն կատարելու համար՝

1) առավելագույնը վեց տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց.

2) առավելագույնը տասը տարի ժամկետով ազատազրկման դատապարտված և սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ ոչ պակաս, քան նշանակված պատժի մեկ երրորդը կրած անձանց:

5. Քրեական գործի հարուցումը մերժել, հարուցված քրեական գործը կարճել, ինչպես նաև դադարեցնել քրեական հետապնդումը կամ չիրականացնել քրեական հետապնդում 2018 թվականի հոկտեմբերի 21-ը ներառյալ կատարած հանցագործությունների դեպքերով (բացառությամբ անմիջականորեն մարդու մահվան հանգեցրած դեպքերի, որոնցով առկա է տուժողի իրավահաջորդի առարկությունը), որոնցով՝

1) անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան չորս տարի ժամկետով ազատազրկում.

2) սույն հոդվածի 2-րդ մասի 1-8-րդ կետերով նախատեսված անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություն կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան վեց տարի ժամկետով ազատազրկում.

3) անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են անզգուշությամբ հանցագործություն կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան վեց տարի ժամկետով ազատազրկում.

4) անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է միայն ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ:

6. Սույն հոդվածի 5-րդ մասը կիրառվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի ~~1-ին պարբերության~~ դրույթների պահպանմամբ:

7. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտով նշանակված պատժաչափը կրճատել՝

1) երկու երրորդով՝ անզգուշությամբ հանցագործություն կատարած անձանց նկատմամբ.



2) կիսով չափ՝ դիտավորությամբ հանցագործություն կատարելու համար առավելագույնը տասը տարի ժամկետով ազատազրկման դատապարտված և նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատազրկման ձևով պատիժ չկրած կամ կրած, սակայն դատվածություն չունեցող անձանց նկատմամբ.

3) մեկ երրորդով՝ դիտավորությամբ հանցագործություն կատարելու համար առավելագույնը տասը տարի ժամկետով ազատազրկման դատապարտված և նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատազրկման ձևով պատիժ կրած և դատվածություն ունեցող անձանց նկատմամբ.

4) մեկ քառորդով՝ դիտավորությամբ հանցագործություն կատարելու համար տասը տարուց ավելի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ:

8. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտով նշանակված պատժաչափը կրճատել **վեց հինգ** ամսով (բացառությամբ սույն հոդվածի 10-րդ մասի 6-րդ կետով նախատեսված դեպքերի)՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, 112-րդ հոդվածի 2-րդ մասով, 123-րդ հոդվածի 3-րդ մասով, 152-րդ հոդվածով, 154-րդ հոդվածով, 165-րդ հոդվածի 4-րդ մասով, 175-րդ հոդվածի 1-ին մասով, 190-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 226-րդ հոդվածով, 235-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 266-րդ հոդվածի 1-ին մասով, 274-րդ հոդվածի 2-րդ մասով, 275-րդ հոդվածի 2-3-րդ մասերով, 280-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 284-րդ հոդվածի 4-րդ մասով, 297-րդ հոդվածի 2-րդ մասով, 327-րդ հոդվածով, 340-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով, 347-րդ հոդվածի 4-րդ մասով, 348-րդ հոդվածով, 349-րդ հոդվածի 3-րդ մասով, 356-րդ հոդվածի 3-րդ մասով, 357-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, 358-րդ հոդվածի 3-5-րդ մասերով, 359-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, 361-րդ հոդվածի 7-րդ մասով, 362-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 363-րդ հոդվածի 5-րդ մասով, 364-րդ հոդվածի 3-րդ մասով, 365-րդ հոդվածի 4-րդ մասով, 366-րդ հոդվածի 4-րդ մասով, 367-րդ հոդվածի 3-րդ մասով, 368-րդ հոդվածի 3-րդ մասով, 369-րդ հոդվածի 3-րդ մասով, 371-րդ հոդվածի 3-րդ մասով, 373-րդ հոդվածի 4-րդ մասով, 377-րդ հոդվածի 3-րդ մասով, 378-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունները կատարելու համար դատապարտված անձանց նկատմամբ, եթե դրանք հանցավորձ կամ հանցագործության նախապատրաստություն չեն:

9. Համաներում հայտարարելով՝ դադարեցնել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձանց նկատմամբ իրականացվող վերահսկողությունը:

10. Համաներումը չկիրառել (բացառությամբ սույն հոդվածի **1-ին և 2-րդ մասերով, 5-րդ մասով, 9-րդ և 11-րդ մասերով** նախատեսված դեպքերի)՝

1) այն անձանց նկատմամբ, որոնց նկատմամբ վերջին տասը տարվա ընթացքում՝

ա. նշանակված պատժաչափը կրճատվել է Հայաստանի Հանրապետության նախագահի՝ ներում շնորհելու մասին հրամանագրի կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ համաներում հայտարարելու մասին որոշման հիման վրա և կարող են մեղադրվել կամ մեղադրվում են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար, կամ

բ. որոնց պատիժը կրելուց ազատել են Հայաստանի Հանրապետության նախագահի՝ ներում շնորհելու մասին հրամանագրի կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ համաներում հայտարարելու մասին որոշման հիման վրա և կարող են մեղադրվել կամ մեղադրվում են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար, կամ

գ. որոնց նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել կամ քրեական հետապնդումը դադարեցվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ համաներում հայտարարելու մասին որոշման հիման վրա և կարող են մեղադրվել կամ մեղադրվում են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար, կամ

2) այն անձանց նկատմամբ, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ կարող են մեղադրվել կամ մեղադրվում են կալանավորման տակ գտնվելու կամ պատիժը կրելու ընթացքում կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար.

3) մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հետախուզման մեջ գտնվող անձանց նկատմամբ, բացառությամբ այն անձանց, որոնք 2019 թվականի փետրվարի 1-ը ներառյալ կամովին կներկայանան քրեական հետապնդման մարմիններ, իսկ եթե գործը դատարանի վարույթում է՝ դատարան.

4) հանցագործությունների առանձնապես վտանգավոր բեցիդիվի դեպքում.

~~5) այն անձանց նկատմամբ, որոնք չեն հատուցել կամ այլ կերպ չեն հարթել հանցագործությամբ պատճառված նյութական վնասը, կամ առկա է վեճ հատուցման ենթակա վնասի կապակցությամբ: Տուժողին պատճառված վնասը համարվում է հատուցված, եթե տուժողի կամ տուժողի իրավահաջորդի վնասի հատուցումն ուղղակիորեն ապահովելու անհնարինության դեպքում անձը դրամական գումարը կամ արժեթուղիքը հանձնել է նուտարի դեպոզիտ:~~

65) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասով, 112-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով, 132-րդ հոդվածով, 132.2-րդ հոդվածով, 133-րդ հոդվածի 3-րդ մասով, 18-րդ գլխով, 149-րդ հոդվածով, 150-րդ հոդվածով, 153-րդ հոդվածով, 154.1-րդ հոդվածով, 154.2-րդ հոդվածով, 154.4-րդ հոդվածով, 154.5-րդ հոդվածով, 164-րդ հոդվածով, 166-րդ հոդվածով, 168-րդ հոդվածով, 175-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 217-րդ, 218-րդ, 219-224-րդ հոդվածներով, 238-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով, 261-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 262-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 265-րդ հոդվածով, 266-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 272-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 287-րդ հոդվածի 4-րդ մասով, 299-րդ հոդվածով, 300-300.2-րդ հոդվածներով, 301.1-ին հոդվածով, 302-305-րդ հոդվածներով, 309.1-ին հոդվածով, 310.1-ին հոդվածով, 314.3-րդ հոդվածով, 329-րդ հոդվածի 2-րդ մասով, 336-րդ հոդվածով, 341-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 352-րդ հոդվածի 3-րդ մասով, 358.1-ին հոդվածով, 33-րդ գլխով նախատեսված հանցագործությունները կատարելու մեջ մեղադրվող կամ այդ հանցագործությունները կատարելու համար դատապարտված անձանց նկատմամբ, եթե դրանք հանցավորձ կամ հանցագործության նախապատրաստություն չեն:

67) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը կատարելու մեջ մեղադրվող և 37 տարեկանը չլրացած անձանց նկատմամբ, եթե դա հանցավորձ կամ հանցագործության նախապատրաստություն չէ:

78) մի քանի հանցագործություն կատարած անձանց նկատմամբ, եթե այդ հանցագործություններից թեկուզ մեկի համար սույն օրենքով համաներում կիրառելն արգելվում է:

89) այն անձանց նկատմամբ, որոնք դիտավորությամբ կատարած հանցագործության համար պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել են և մեղադրվում են պատժի չկրած մասի ընթացքում կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են պատժի չկրած մասի ընթացքում կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

940) այն անձանց նկատմամբ, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և կարող են մեղադրվել կամ մեղադրվում են փորձաշրջանի ընթացքում կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են փորձաշրջանի ընթացքում կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

1044) ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ:

11. Համաներում հայտարարելով՝

1) ~~պատժից ազատել~~ 2016 թվականի հուլիսի 17-ից հուլիսի 31-ը Հայաստանի Հանրապետության ոստիկանության պարեկապահակետային ծառայության գնդի տարածքում հանցագործություն կատարած, վերջիններիս հետ հանցակցած, այդ նպատակով հանցավորձ կամ հանցագործության նախապատրաստություն, հարակից տարածքներում դրանց հետ առնչություն ունեցող հանցագործություն կատարած, ինչպես նաև 2015 թվականի ապրիլի 24-ին զանգվածային անկարգությունների նախապատրաստության համար մեղադրվող կամ դատապարտված անձանց նկատմամբ հարուցված քրեական գործը կարճել, քրեական հետապնդում չիրականացնել կամ քրեական հետապնդումը դադարեցնել, կամ նրանց պատժի ազատել, եթե դրա դեմ չեն առարկում պատանդառված և (կամ) ֆիզիկական վնաս կրած տուժողները:

2) սույն մասի 1-ին կետը չի տարածվում նույն կետում նկարագրված իրադարձությունների ընթացքում կատարված այն արարքների նկատմամբ, որոնք անմիջականորեն հանգեցրել են մարդու մահվան:

3) սույն մասի 1-ին կետում նկարագրված հանցագործությունների արդյունքում պատճառված նյութական վնասի հատուցման հարցը կարող է լուծվել քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

12. Սույն հոդվածի 31-5-րդ և 7-րդ մասերը կիրառվում են անձի նկատմամբ, եթե սույն հոդվածի 8-րդ և 10-րդ մասերով այլ բան նախատեսված չէ:

## ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Հոդված 3. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից ~~օրվան հաջորդող տասներորդ օրը~~:

### Հոդված 4. Օրենքի գործողությունը և կիրառման ապահովումը

1. Համաներման կիրառումը չի ազատում դատարանների դատավճիռներով նշանակված լրացուցիչ պատիժներից:

2. Համաներման կիրառման դեպքում օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված տուժողին պատճառված վնասի հատուցման հարցը կարող է լուծվել քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

3. Համաներման կիրառման դեպքում դատվածության մարման հարցը լուծվում է օրենքով սահմանված կարգով:

4.3. Սույն օրենքը կիրառվում է արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը կիրառելուց հետո:

5.4. Հանցագործությունների և դատավճիռների համակցության դեպքերում համաներման կիրառվում է վերջնական պատժի նկատմամբ՝ հանցագործությունների կամ դատավճիռների համակցության կանոններով այն սահմանելուց հետո: Սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կանոնները հանցագործությունների համակցության նկատմամբ կիրառվում են, եթե սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում մեղսագրվող արարքների համար նախատեսված առավելագույն պատիժների հանրագումարը չի գերազանցում չորս տարի ժամկետով ազատազրկումը, սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում՝ վեց տարի ժամկետով ազատազրկումը, իսկ սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված դեպքերում՝ վեց տարի ժամկետով ազատազրկումը:

6.5. Ազատազրկման վայրերում ալկոհոլամոլությունից կամ թմրամոլությունից հարկադիր բուժվող անձանց նկատմամբ համաներումը կիրառվում է բուժման համապատասխան կուրսն անցնելուց հետո:

7.6. Հաշմանդամության և տարիքային հիմքով համաներումը կիրառվում է այն անձանց նկատմամբ, որոնք առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ են ձանաչվել, կամ որոնց 60 տարին լրացել է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը:

8.7. Այլ պետությունների դատարանների կողմից դատապարտված այն անձանց նկատմամբ, որոնք պատիժը կրում են Հայաստանի Հանրապետությունում, համաներումը կիրառվում է նրանց կատարած արարքների համար պատասխանատվություն սահմանող՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդվածներին համապատասխան:

9.8. Սույն օրենքի կատարումը վերապահել՝

1) Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի և վերաքննիչ քրեական դատարաններին՝

ա. այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի կամ վերաքննիչ քրեական դատարաններում են, սակայն մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը չեն քննվել, կամ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը քննվել են, բայց դատավճիռներն օրինական ուժի մեջ չեն մտել.

բ. այն անձանց նկատմամբ, որոնց հանդեպ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, կամ պատժի կրումը հետաձգվել է: Նշված անձանց նկատմամբ սույն օրենքի կիրառման հարցը լուծում է դատարանը՝ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդության հիման վրա.

2) Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանին՝ Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից դատապարտված այն անձանց նկատմամբ, որոնք պատիժը կրում են Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս.

3) քրեական հետապնդման մարմիններին՝ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը կամ նյութերը քննում են նշված մարմինները.

4) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների պետերին՝ այն անձանց նկատմամբ, որոնք պատիժը կրում են քրեակատարողական հիմնարկներում.

5) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությանը՝ այն անձանց նկատմամբ, որոնք՝

ա. դատապարտվել են ազատությունից զրկելու հետ չկապված պատժի՝

բ. պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել են, և նրանց վարքագծի նկատմամբ իրականացվում է վերահսկողություն.

6) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը՝ այն անձանց նկատմամբ, որոնք դատապարտվել են զինվորական ծառայության մեջ սահմանափակման ձևով պատժի.

7) կարգապահական գումարտակի հրամանատարին՝ այն անձանց նկատմամբ, որոնք պատիժը կրում են կարգապահական գումարտակում:

**109.** Հետաքննության և նախաքննության մարմինների, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների պետերի, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության, [Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության](#) և կարգապահական գումարտակի հրամանատարների՝ համաներում կիրառելու վերաբերյալ ընդունած որոշումների օրինականության նկատմամբ հսկողությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

**1140.** Սույն հոդվածի **98**-րդ մասով նախատեսված մարմինները համաներման ակտը պետք է կիրառեն սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում: Եթե սույն հոդվածի **98**-րդ մասով նախատեսված մարմինների տրամադրության տակ առկա են համաներումը կիրառելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վերջիններս պարտավոր են համաներման ակտը կիրառել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր ժամկետի լրանալուն:

**4412.** Օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության դեպքում համաներման կիրառման համար դատապարտյալի համաձայնությունը չի պահանջվում:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

«Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կ-401-22.10.2018, 31.10.2018-ՊԻՄԻ-011/1 օրենքի և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կ-401<sup>1</sup>-31.10.2018-ՊԻՄԻ-011/1 օրենքի նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ (ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՑՈՂԻ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ Ի ՈՐՈՇՈՒՄԸ
1	«Հ Կառավարություն	«Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) հոդված 2, մաս 10	Առաջարկվում է փոփոխել Նախագծում առկա որոշ հղումներ: Մասնավորապես՝ Նախագծի 2-րդ հոդվածի 10-րդ մասում համաներում չկիրառելու պայմաններից բացառություն նախատեսել միայն նույն հոդվածի 9-րդ և 11-րդ մասերով նախատեսված դեպքերի համար՝ հանելով նույն հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասերին կատարված հղումները: Ըստ այդմ՝ Նախագծի 2-րդ հոդվածի 12-րդ մասում 3-5-րդ մասերին կատարված հղումը փոփոխել՝ հղում կատարելով նաև նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերին:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
2	«Հ Կառավարություն	Նախագծի հոդված 2, մաս 6, մաս 10	Առաջարկվում է օրինական ուժի մեջ մտած դատավճռով սահմանված տուժողին պատճառված վնասը չհատուցելու հանգամանքը չդիտել որպես համաներում կիրառելու արգելք: Դատավճռի առկայության պայմաններում տուժողին պատճառված վնասի հատուցման հարցը կարող է լուծվել քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Միաժամանակ, առաջարկվում է տուժողին պատճառված վնասի	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			<p>հատուցման առումով Նախագծի 2-րդ հոդվածի 6-րդ մասում հղում կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասին ամբողջությամբ՝ Նախագծի 2-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերի նկատմամբ կիրառելով տուժողին պատճառված վնասի հատուցման պարտադիր կանոնը: Վնասը չհատուցելու կամ այլ կերպ չհարթելու պայմաններում տվյալ փուլում համաներում չի կիրառվի և գործի վարույթը կշարունակվի սովորական կարգով:</p>		
3	ՀՀ Կառավարություն	Նախագծի հոդված 2, մաս 11	<p>Առաջարկվում է Նախագծի 2-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված դեպքերում ոչ թե պատժից ազատել, այլ նշված դեպքերով անձանց նկատմամբ հարուցված քրեական գործը կարճել, քրեական հետապնդում չիրականացնել կամ քրեական հետապնդումը դադարեցնել, կամ նրանց պատժի ազատել:</p>	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
4	ՀՀ Կառավարություն	Նախագծի հոդված 4, մաս 10	<p>Առաջարկվում է, Նախագծի 4-րդ հոդվածի 9-րդ մասի 6-րդ կետին համահունչ, Նախագծի նույն հոդվածի 10-րդ մասում լրացնել նաև «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության» բառերը:</p>	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է:
5	ՀՀ Կառավարություն	Նախագծի հոդված 2, մաս 8	<p>Առաջարկվում է նշանակված պատժաչափը վեց ամսով կրճատելու փոխարեն նշանակված պատժաչափը կրճատել ինն ամսով:</p>	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
6	ՀՀ Կառավարություն	Նախագծի հոդված 3	<p>Առաջարկվում է որպես ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել պաշտոնական հրապարկմանը հաջորդ օրը: Համանման փոփոխություն կատարել Փաթեթում ընդգրկված մյուս</p>	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			նախագծում:		
7	<b>«ԵԼՔ» խմբակցություն</b>	Նախագծի հոդված 2, մաս 2	<p>Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել 9-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «9) սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ անչափահաս երեխա ունեցող միայնակ ծնող հանդիսացող անձանց»:</p> <p>Առաջարկի նպատակը հավասար մոտեցման ցուցաբերումն է գրեթե նույն կարգավիճակն ունեցող միջին երեք տարեկան երեխա ունեցող անձանց և անչափահաս երեխա ունեցող և միայնակ ծնող հանդիսացող անձանց նկատմամբ:</p> <p>Նախագծով նախատեսվում է, որ պատժից կազատվեն առավելագույնը վեց տարի ժամկետով ազատազրկման դատապարտված միջին երեք տարեկան երեխա ունեցող անձինք և նման պարագայում, կարծում ենք, որ արդարացի կլինի նաև, որ պատժից ազատվեն առավելագույնը վեց տարի ժամկետով ազատազրկման դատապարտված այն միայնակ ծնողները, որոնք ունեն անչափահաս երեխա/ներ/:</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է մասնակի. հարկ է նշել, որ Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով արդեն իսկ նախատեսված է մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատժից ազատելու հնարավորությունը, եթե նրանք դատապարտվել են մինչև վեց տարի ժամկետով ազատազրկում: Այսինքն՝ անկախ նրանից մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձը հանդիսանում է միայնակ ծնող, թե ոչ, եթե դատապարտվել է մինչև վեց տարի ժամկետով ազատազրկման, նրա նկատմամբ կիրառվում է համաներում՝ ազատելով պատժից:</p>	Ընդունվել է մասնակի:
8	<b>Պատգամավոր Նաիրա Զոհրաբյան</b>	Նախագծի հոդված 2, մաս 2	<p>Առաջարկվում է Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերում «երեք» բառերը փոխարինել «երկու» բառերով.</p> <p>«3) սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ երկու կամ ավելի անչափահաս երեխա ունեցող անձանց.</p> <p>4) սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ մինչև երկու տարեկան երեխա ունեցող անձանց.»:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել:</p> <p>Նախագծով մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատժից ազատելու կամ երեք կամ ավելի անչափահաս երեխաներ ունեցող անձանց պատժից ազատելու տրամաբանությունը համահունչ է ՀՀ որդեգրած քրեական և սոցիալական քաղաքականությանը: Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգիրքը նախատեսում է մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատժի կրումը հետաձգելու կամ նրանց պատժից ազատելու հնարավորությունը:</p> <p>Այս խումբ անձինք օգտվում են նաև</p>	Չի ընդունվել:

				<p>պետության կողմից տրամադրվող որոշ արտոնություններից: Օրինակ՝ երեխայի մինչև երեք տարին լրանալն է, որ տրվում է նպատակային արձակուրդ: Անդրադառնալով երեք կամ ավելի անչափահաս ունենալու հանգամանքին, հարկ է նշել, որ այն համարվում է վերարտադրողականության շեմը: Միաժամանակ, հարկ է նկատել, որ Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի վերաբերյալ ներկայացված առաջարկությունը վատթարացնող վիճակ է ստեղծում այն անձանց համար, ովքեր ունեն ոչ թե մինչև երկու, այլ մինչև երեք (ինչպես Նախագծում է նախատեսված) տարեկան երեխա:</p>	
9	<b>Պատգամավոր Հայկ Բարոխանյան</b>	Նախագիծ	<p>Հաշվի առնելով այն փաստը, որ վերոհիշյալ օրենքը որոշ չափով տարածվում է «Սասնա ծռեր» քրեական գործով անձանց, որի արդյունքում կան զոհեր, անտրամաբանական են գտնում, որ համաներումը չի տարածվում Նորք-Մարաշ քրեական գործի մասնակիցների վրա, որտեղ զոհեր և գործողություններ չկային և կար միայն մտադրություն:</p> <p>Բացի այդ, նման դեպքում խախտվում է Սահմանադրության 29-րդ հոդվածը, քանի որ առաջ է գալիս խտրական վերաբերմունք:</p> <p>Առաջարկում են բարի կամքի դրսևորումը տարածել նաև «Նորք-Մարաշ» քրեական գործով անցնող անձանց վրա:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել. Նախագծում հիմք է ընդունվել կատարված արարքի հիմքում ընկած շարժառիթը, ըստ այդմ՝ առանձին կետով անդրադարձ է կատարվել 2016 թվականի հուլիսի 17-ից հուլիսի 31-ը Հայաստանի Հանրապետության ոստիկանության պարեկապահակետային ծառայության գնդի տարածքում կատարված իրադարձություններին:</p>	Չի ընդունվել: